

* *

Միւս օրը, ձերունի որսորդ Յակովբը հրացանը ուսին՝ անտառը մտաւ աղուէս որսալու. և երբ մթնալուն համար կամենում էր ետ դառնալ իւր որսացած քանի մը աղուէսներով, ծառի մը տակէն անցած ժամանակ՝ թոյլ ձայն մը լսեց, որ եղնիկի ձայնի էր նմանում:

Հետաքրքրեցաւ, ձայնին կողմը գնաց. հեռուէն սև իր մը նկատեց. Մօտեցաւ և նայեց:

Փոքրիկ եղնիկն էր. դունչը մօր գլխի վրայ՝ մեռել էր. իսկ քանի մի կաթիլ արցունք ցրտից սառած՝ կնցել էին նորա ականադրիւրների վրայ...

Աստուած չէր ուզել, որ մօր մեռնելուց յետոյ՝ խնդճուկ եղնիկը ապրէր: Խեղճ որբը մեռել էր շատ լալուց յետոյ:

Մի քանի ծանր ճիւղեր խորտակուած, իրենց վրայի ձիւնը սփռել էին նոցա վրայ որպէս հող, և իրենք ևս ընկել էին այդ կոյտի վրայ որպէս պսակ....

Վ. ՓԱՅՏԵՆՏ

Ա.ԳԱՄ Ի ԳՈՂԳՈԹԱ ԼԵՐԻՆ

Այն ինչ յետին 'ի հառաչանս անդ Յիսուս
Ըզգերեզմանս երաց, շարժեաց ըզլերինս,
Գիսախոիւ անդէն Ադամ և քնալից
Ըզգլուխն 'ի վեր առ և յոտին կանգնեցաւ:

Յեղյեղեաց շուրջ զիւրեաւ ըզրիսըն բըժոտ,
Զարմանաւքանչ լըցեալ ահիւ պակուցմամբ.
Եւ սըրտատրոփ ձայն արձակեաց. Ո՛վ իցէն
Արինազանգդ այդ առ 'ի կախ ոգեսպառ:

Եւ 'ի գիտեն' 'ի խորշոմեալ ճակատուն,
Ալևորեալ հերացն ու այտից ուրուատիպ,
Ապաշխարող աջով կորանս ած և վնաս:

Ի կողակիցն անդրէն դարձեալ լալազին,
Եւ դոչեաց այնպէս՝ մինչև լեառներն թընդաց,
« Առ 'ի քո վասն 'ի մահ ըզՏէրն իմ ետու »:

ՄԻՆԾՈՒԻ